*ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1*

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ

N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2022/28-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք.Երևան <<12>> <<12>> 2022թ.

<<Պետական Պահպանության Ծառայությունը>>, ի դեմս Պետական պահպանության ծառայության պետ Ս. Հովհաննիսյանի, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և Պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բլիզարդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 29.11.2022 թվականին կնքված N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2022/28-1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետը, Կողմերը համաձայնության եկան Պայմանագրով նախատեսված վճարման պայմանները փոխել և ավելացնել նոր՝ 4.1.1 կետ հետևյալ խմբագրությամբ՝ «4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 985000 (ինը հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամը Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում՝ մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:»:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Պետական պահպանության ծառայություն | <<Բլիզարդ» ՍՊԸ |
| ք.Երևան, Պոռշյան փ.1-ին փակուղի 20 | Իրավ. հասցե՝ Ղ. Փարպեցի 11ա բն 29-30 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի | Գործ. հասցե՝ Վ. Սարգսյան 26/1 |
| գործառնական վարչություն | « Ամերիաբանկ » ՓԲԸ |
| Հ/հ 900011004497 | Հ/հ 1570022641230100 |
| ՀՎՀՀ 00006796 | ՀՎՀՀ 02577644 |
| Պետ՝ Ս. Հովհաննիսյան | Տնօրեն Ա. Խաչատրյան |